ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի և «Ստարմալե» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի հունիսի 14-ին կնքված N ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-21/ՏԱ-3 ծածկագրով պայմանագրի շրջանակներում փոփոխություն կատարելու վերաբերյալ

ք. Երևան «13» հուլիսի 2021թ.

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը, ի դեմս ռեկտոր Դ.Գալոյանի, որը գործում է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Ստարմալե» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Ազիզյանի, որը գործում է «Ստարմալե» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, այսուհետ կողմեր, ղեկավարվելով Գնորդի և Վաճառողի միջև 2021 թվականի հունիսի 14-ին կնքված N ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-21/ՏԱ-3 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.8 կետի, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերի երկկողմանի համաձայնությամբ որոշեցին 2021 թվականի հունիսի 14-ին կնքված N ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-21/ՏԱ-3 ծածկագրով պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման-վճարման ժամանակացույցով սահմանված մատակարարաման ժամկետը **(Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվարից 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում)** 1-ին չափաբաժնի մասով փոփոխել համաձայն պայմանագրի 8,8 կետի:

1.2 1-ին չափաբաժնի մասով ծառայությունների մատուցման վերջնաժամկետ սահմանել 2021թվականի օգոստոսի 11-ը ներառյալ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է սույն համաձայնագրի մեկական օրինակ:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ	«Ստարմալե» ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 128	ք. Երևան, Գալշոյան 15/2
Գանձապետարանի հաշվարկային հաշիվ	«ինեկոբանկ » ՓԲԸ
900018001876	Հ/Հ 2051722030071001
ՀՎՀՀ՝ 01503224	ՀՎՀՀ 03530009
Ռեկտոր _____ Դ.Գալոյան	Տնօրեն _____ Հ. Ազիզյան
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ